ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն Տ. ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Աշոտ Աղաբաբյանի, Արման Սահակյանի, Վարդան Այվազյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Արմեն Աշոտյանի, Կարեն Ավագյանի և Գալուստ Սահակյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից հողի հարկ վճարողներին հարկային արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից հողի հարկի արտոնությունների տրամադրմանը թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց: Անընդունելի է կազմակերպությունների համար արտոնությունների նախատեսումը: Կարծում ենք, որ տույժերի և տուգանքների գծով արտոնությունների սահմանումը կբերի հարկային կարգապահության անկման, հարկ վճարողների մոտ կստեղծի հարկային պարտավորությունների չկատարման անպատժելիություն: Նախագծում անհրաժեշտ է նախատեսել արտոնությունների տրամադրման այնպիսի մեխամիզմ, ինչը կնպաստի հողի հարկի ապառքների կրճատմանը, մասնավորապես, հարկատուները հողի հարկի չվճարված տույժերից պետք է ազատվեն չվճարած հարկի գումարների՝ մարմանը համամասնորեն:

2. 2-րդ հոդվածով ներկայացված՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից հողի հարկի դիմաց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաշվարկված և վճարված տույժերի ու տուգանքների գումարների ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին հաշվանցումը՝ հարկատուի հողի հարկի գծով, գտնում ենք ոչ նպատակահարմար:

Դա կբերի համայնքների բյուջեների արտոնության տրամադրմանը հաջորդող տարիներին եկամուտների կորստի: Այդ կապակցությամբ առաջարկում ենք հոդվածը հանել:

3. 4-րդ հոդվածում անհրաժեշտ է վերանայել օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետը, քանի որ, ներկայացված խմբագրությամբ օրենքի ընդունման դեպքում, հողի հարկ վճարողներն, իմանալով հարկային արտոնությունների մասին, մինչև 2009 թվականի հունվարի 1-ը չեն վճարի հողի հարկը:

4. Անհրաժեշտ է հստակեցնել, թե Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան նպատակային նշանակության որ հողամասերի համար է սահմանվում արտոնությունը: Նախագծում նշված «գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ» հասկացությունը չի վերաբերում բնակավայրի սահմաններում գտնվող տնամերձ հողամասերին, որոնք համարվում են բնակավայրի նշանակության հողամասեր:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն այս տեսքով համարում է անընդունելի:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վ. Տերտերյանը:

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ